ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

Սեպտեմբերի 20-ին՝ ժամը 12.15-ի, տեղի կունենա Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ:

Օրակարգ՝

1.Ֆակուլտետի խորհրդի 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանի հաստատում *(Սկզբնական կրթության ֆակուլտետի 2016-2020թ.թ. ռազմավարական ծրագրի գործողությունների պլանի համապատասխան):*	Հ. Խաչատրյան
2.Ֆակուլտետի ամբիոնների աշխատանքային պլանների և նիստերի օրակարգերի քննարկում և հաստատում:	Ամբիոնների վարիչներ
3. Ֆակուլտետի խորհրդի նոր կազմի ձևավորման մասին:	Հ. Խաչատրյան
4.Ուսումնական գործընթացի կազմակերպման հարցեր. *առկա, հեռակա:*	Ա. Դալլաքյան
5. • 2018-2019 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 1-ին և 2-րդ կիսամյակների քննաշրջանի արդյունքների ներկայացում և քննարկում: • 2018-2019 ուստարվա առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի լուծարային փուլերի արդյունքների ներկայացում և քննարկում: • 2018-2019 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կիսամյակի քննաշրջանի լուծարային փուլերի արդյունքների ներկայացում և քննարկում:	Ա. Դալլաքյան
6.Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների և ընթացքի մասին. • առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսեր /ուսումնաճանաչողական պրակտիկա/, • առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսեր /ամփոփիչ-գնահատողական պրակտիկա/	Ա. Միքայելյան Ա. Ղազարյան
7.Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում և հաստատում:	Հ. Խաչատրյան Ամբիոնների վարիչներ
8.Ընթացիկ հարցեր:	

ԼՍԵՑԻՆ - **1.** Ֆակուլտետի խորհրդի 2019-2020 ուստարվա աշխատանքային պլանի հաստատում /Սկզբնական կրթության ֆակուլտետի 2016-2020թ.թ. ռազմավարական ծրագրի գործողությունների պլանին համապատասխան:

Զեկուցող՝ Հ.Խաչատրյան

/Աշխատանքային պլանը կցվում է/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Վ.Կարապետյանը, Լ.Պողոսյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2019-2020 ուսումնական տարվա սկզբնական կրթության ֆակուլտետի աշխատանքային պլանը:

ԼՍԵՑԻՆ - **2**. Ֆակուլտետի ամբիոնների աշխատանքային պլանների և նիստերի օրակարգերի քննարկում և հաստատում:

Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ

/Աշխատանքային պլանները կցվում են/

Հ.Խաչատրյանը առաջարկեց ամբիոնների վարիչներին տարբեր ուղղություններով ծավալվող ամբիոնային աշխատանքները, ավարտական աշխատանքների և մագիստոսական թեզերի թեմաները, բխեցնել, հարաբերակցել ամբիոնների գիտական ուղղություններին և հետաքրքրություններին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել 2019-2020 ուսումնական տարվա ամբիոնների աշխատանքային պլանները:

ԼՍԵՑԻՆ - **3.** Ֆակուլտետի խորհրդի նոր կազմի ձևավորման մասին:

Զեկուցող՝ Հ.Խաչատրյան

Դեկան Հ.Խաչատրյանը տեղեկացրեց, որ խորհրդի կազմում փոփոխություններ չեն եղել, քանի որ որոշ փոփոխություններ՝ ուսանողների կազմից արդեն կատարվել են 2019 թվականի մայիս ամսին (պայմանավորված ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ընտրություններով), երբ արդեն ավարտական կուրսերի ուսանողներն ավարտել էին բուհը, նրանց փոխարեն խորհրդի կազմում ընդգրկվել են բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի ցածր կուրսերում սովորող ուսանողներ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Վ.Կարապետյանը, Ջ.Գյուլամիրյանը, Գ.Հայրապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել ֆակուլտետի խորհրդի՝ 2019-2020 ուսումնական տարվա կազմը:

ԼՍԵՑԻՆ - **4.** Ուսումնական գործընթացի*(ուսուցման առկա և հեռակա համակարգեր*) կազմակերպման հարցեր*:*

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Լ.Պողոսյանը, Ք.Հովհաննիսյանը, Հ.Խաչատրյանը:

Հ.Խաչատրյանը խորհրդի անդամների ուշադրությունը հրավիրեց հատկապես հեռակա ուսուցման համակարգի ԲԿԾ 1-ին և 2-րդ կուրսերի ուսումնական գործընթացի կազմակերպման հարցերին, խնդրեց ուշադիր լինել ամբիոններում, քանի որ այդ կուրսերի ուսումնական գործընթացը մեկնարկում է արդեն իսկ հոկտեմբերից՝ on line տարբերակով: Այս առումով հարկ կլինի ժամանակին տեղադրել ուսումնամեթոդական փաթեթները, իրականացնել խորհրդատվություն, նախնական գնահատում և այլն:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - 5.

- 2018-2019 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի 1-ին և 2-րդ կիսամյակների քննաշրջանի արդյունքների ներկայացում և քննարկում:
- 2018-2019 ուստարվա առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի լուծարային փուլերի արդյունքների ներկայացում և քննարկում:
- 2018-2019 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կիսամյակի քննաշրջանի լուծարային փուլերի արդյունքների ներկայացում և քննարկում:

/Հաշվետվությունները կցվում են/

Ա.Դալլաքյանը նշեց, որ 2018-2019 ուստարվա առկա ուսուցման համակարգի երկրորդ կիսամյակի քննաշրջանի լուծարային փուլերն ավարտվել են նախորդ օրը և հետևաբար դրանք ամփոփելու համար ժամանակ է հարկավոր, 2018-2019 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կիսամյակի քննաշրջանի լուծարային փուլերը ևս դեռ չեն ավարտվել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Միքայելարյանը, Լ.Պողոսյանը, Գ.Հայրապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1.Ընդունել ի գիտություն:

2. 2018-2019 ուստարվա առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի լուծարային փուլերի և հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կիսամյակի քննաշրջանի լուծարային փուլերի արդյունքներին անդրադառնալ հաջորդ նիստին:

ԼՍԵՑԻՆ - 6. Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների և ընթացքի մասին.

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսեր /ուսումնաճանաչողական պրակտիկա/,
  առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսեր /ամփոփիչ-գնահատողական պրակտիկա/

Զեկուցողներ՝ Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան

/Հաշվետվությունները կցվում են/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Վ.Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Հ.Խաչատրյանը:

Դեկան Հ.Խաչատրյանը նշեց, որ շատ կարևոր է պրակտիկայի մեթոդիստների և հետազոտական աշխատանքների (կուրսային, ավարտական) ղեկավարների համագործակցությունը, այն է՝ ուսանողների ուղղորդումը իրենց հետազոտական աշխատանքների փորձարարական հատվածն արդյունավետ իրականացնելու համար:

Ա.Դալլաքյանը պրակտիկայի իրականացման ընթացքի վերահսկողության և աշխատանքների բարելավման նպատակով առաջարկեց երեքշաբթի օրերը, որ ֆակուլտետի պրակտիկաների ֆիքսված օրն է, դարձնել դեկանի, փոխդեկանների և ամբիոնների վարիչների՝ դպրոցներ ու մանկապարտեզներ կատարվելիք այցելությունների օր: Դա հնարավորություն կտա միաժամանակ դիտարկելու աշխատանքները և՛ չորրորդ, և՛ երրորդ կուրսերում:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2. Հաստատել պրակտիկայի առարկայական նկարագրերի լրամշակված տարբերակները:

3. Երեքշաբթի օրերն ամրագրել որպես պրակտիկայի ընթացքի վերահսկողության՝ դպրոցներ ու մանկապարտեզներ այցելության օր:

Լսեցին- 7. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների քննարկում և հաստատում:

Զեկուցողներ՝ Հ.Խաչատրյան, ամբիոնների վարիչներ

/Ամբիոնների քաղվածքները և ցանկերը կցվում են:/

Դեկան Հ.Խաչատրյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, ՄԿԾ առաջին կուրսերում մագիստրոսական թեզերի թեմաների, ղեկավարների և ուսանողների բաշխման գործընթացը դեռևս ավարտված չէ, ուստի այդ հարցը կքննարկվի ու կհաստատվի հաջորդ նիստին:

Արտահայտվեցին- Հ.Խաչատրյանը, Ա.Դալլաքյանը, Հ.Հարությունյանը:

Որոշեցին- 1. Հաստատել ավարտական աշխատանքների (առկա ուսուցման համակարգի ԲԿԾ 4-րդ և հեռակա ուսուցման համակարգի ԲԿԾ 5-րդ կուրսերի) թեմաները:
2. Մագիստրոսական թեզերի հաստատման հարցը հետաձգել խորհոդի հաջորդ նիստ:

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ - 1. «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» ծրագրի շարունակականության ապահովման վերաբերյալ հարցը:

Զեկուցող՝ Լ.Պողոսյան

Փոխդեկան Լ.Պողոսյանը ներկայացրեց Սկզբնական կրթության ֆակուլտետում «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» ծրագրի շարունակականությունն ապահովելու նպատակով իրականացվող աշխատանքների մասին:Նա նշեց, որ ֆակուլտետում մասնագիտական ամբիոնների կողմից դասավանդվող առարկաների առարկայական նկարագրերում փոփոխություններ են կատարվել՝ դասավանդվող առարկաների առաջադրանքների բովանդակության մեջ ներառվել են սովորողների մուլտիմեդիոն կոմպետենցիաների ձևավորմանը նպաստող առաջադրանքներ: Սակայն ծրագրի շարունակականությունը ապահովելու և զարգացնելու նպատակով դեռևս որոշակի անելիքներ ունենք:

Նա նաև խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ ֆակուլտետն արդեն խնդրանքով դիմել է ուսումնական գործընթացների հարցով պրոռեկտոր պարոն Մելիք-Բախշյանին՝ ֆակուլտետում բակալավրի կրթական ծրագրերում դասավանդվող «ՏՀՏ հենքային դասընթաց» և մագիստրոսի կրթական ծրագրերում դասավանդվող «ՏՀՏ մասնագիտական ոլորտում» դասընթացների առարկայական նկարագրերում փոփոխություններ անելու հանձնարարական տալ Ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնին:

/Զեկուցումը կցվում է/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Ա.Միքայելյանը, Ս.Գրիգորյան, Ա.Դալլաքյան :

Ա.Միքայելյանն առաջարկեց մուլտիմեդիոն ծրագրի ուսումնասիրման ամբիոնային ժամերին մասնակից դարձնել նաև ուսանողներին:

Ա.Դալլաքյանը նշեց, որ ֆակուլտետի երեք ամբիոնների մի շարք դասախոսներ ընդգրկվելով ծրագրին՝ մասնակցել են շատ վերապատրաստումների, ունեն արդեն համապատասխան կոմպետենցիաներ, ստեղծել են էլեկտրոնային ուսումնական նյութերի բազա: Ամբիոնները կարող են քննարկել և ներկայացնել մուլտիմեդիոն բովանդակությամբ դասընթացներ, դրանք ընդգրկել ընտրովի դասընթացների շարքում:

ՈՐՈՇԵՑԻՆ

1. «Նախադպրոցական և տարրական կրթության արդիականացում ժամանակի պահանջներին համապատասխան մասնագետների պատրաստման միջոցով» ծրագրի շարունակականությունն ապահովելու նպատակով՝ հանձնարարել ամբիոնների վարիչներին՝

- ուսումնասիրել և քննարկել ամբիոնի վերապատրաստված դասախոսների կողմից մշակած մուլտիմեդիոն բովանդակությամբ ուսումնամեթոդական նյութերը, էլեկտրոնային բազան և ռեսուրսները,
- կազմել մուլտիմեդիոն բովանդակությամբ դասընթացների առարկայական նկարագրերն ու ուսումնամեթոդական փաթեթները,
- դրանք ընդգրկել ամբիոնների կողմից դասավանդվող դասընթացների/ ընտրովի դասընթացների շարքում:

2. Հետևողական աշխատանքներ իրականացնել ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների մուլտիմեդիոն գրագիտության ու կարողությունների ձևավորման ուղղությամբ:

3.Դիմել ինֆորմատիկայի և դրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնին «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի «ՏՀՏ հենքային դասընթաց» և «ՏՀՏ մասնագիտական ոլորտում դասընթաց» առարկաների մուլտիմեդիոն ծրագրի բովանդակային բաղադրիչներով համալրված առարկայական նկարագրերը ֆակուլտետին տրամադրելու առաջարկով:

ԼՍԵՑԻՆ –

2. Ա. Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս *Միրարփի Ռուբիկի Խաչատրյանին* դոցենտի գիտական կոչման ներկայացնելու հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ջ.Գյուլամիրյանը, Լ.Պողոսյանը, Լ.Տեր-Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ա. Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս *Միրարփի Խաչատրյանին* դոցենտի գիտական կոչման ներկայացնելու հարցը դրական երաշխավորությամբ առաջադրել համալսարանի գիտական խորհրդի քննարկմանը:

Ֆակուլտետի խորհրդի 25 անդամներից ներկա էին 20-ը, որոնցից կողմ քվեարկեցին 20-ը, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

ԼՍԵՑԻՆ - **3.** «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» ԲԿԾ 3-րդ կուրսի ուսանողուհի Գոհար Քոլոզյանին ՈՒԳԸ –ի ուսանողական գիտական աշխատանքները համակարգող նշանակելու հարցը:

Զեկուցող՝ Հ. Խաչատրյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ– Լ.Պողոսյանը, Ջ.Գյուլամիրյանը, Լ.Տեր-Գրիգորրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Որոշեցին «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» ԲԿԾ 3-րդ կուրսի ուսանողուհի Գոհար Քոլոզյանին նշանակել ՈՒԳԸ –ի ուսանողական գիտական աշխատանքները համակարգող:

Անցավ միաձայն:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

Հոկտեմբերի 28-ին՝ ժամը 12.15-ի, տեղի ունեցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ:

Խորհրդի 25 անդամներից ներկա էին 18-ը:

Օրակարգ՝

1. Մագիստրոսական թեզ գրող ուսանողների (առկա և հեռակա ուսուցման համակարգերի ՄԿԾ 1-ին կուրսեր) ղեկավարների և թեմաների հաստատում:

   Զեկուցողներ՝ Ամբիոնների վարիչներ

2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի և հետազոտական աշխատանքների կազմակերպման մասին :

   Զեկուցողներ՝ Ամբիոնների վարիչներ

3. Կրթության որակի բարելավմանն ուղղված անելիքների մասին:

   Զեկուցողներ՝ Լ.Պողոսյան, ամբիոնային պատասխանատուներ

4. Ամբիոնների՝ դպրոցների, մանկապարտեզների և այլ կրթականհաստատությունների հետ համագործակցության մասին:

   Զեկուցողներ՝ Ամբիոնների վարիչներ

5. Ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության աշխատանքային պլանների քննարկում և հաստատում:

   Զեկուցողներ՝ ՈԻԽ և ՈԻԳԸ նախագահներ

6. Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների մասին.

- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրս /մանկավարժահետազոտական պրակտիկա /
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրերի 2-րդ կուրսեր /մանկավարժահետազոտական պրակտիկա/

  Զեկուցողներ՝ Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան

7. Հեռակա ուսուցման համակարգում կրթական, ուսումնական գործընթացին առնչվող հարցերի քննարկում:

   Զեկուցող՝ Ա. Դալլաքյան

8. 2018-2019 ուստարվա առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի լուծարային փուլերի արդյունքների ներկայացում և քննարկում:

- 2018-2019 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կիսամյակի քննաշրջանի լուծարային փուլերի արդյունքների ներկայացում և քննարկում:

Զեկուցող՝ Ա. Դալլաքյան

9. Ընթացիկ հարցեր:
ա/Ավարտական աշխատանք գրող ուսանողների (առկա ուսուցման համակարգի ԲԿԾ 4-րդ և հեռակա ուսուցման համակարգի ԲԿԾ 5-րդ կուրսեր) թեմաների վերաձևակերպում և վերահաստատում:

ԼՍԵՑԻՆ - 1. Մագիստրոսական թեզ գրող ուսանողների (առկա և հեռակա ուսուցման համակարգերի ՄԿԾ 1-ին կուրսեր) ղեկավարների և թեմաների հաստատում:

Զեկուցողներ՝ Ամբիոնների վարիչներ

/Քաղվածքները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Վ.Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել:

ԼՍԵՑԻՆ - 2. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի և հետազոտական աշխատանքների կազմակերպման մասին :

Զեկուցողներ՝ Ամբիոնների վարիչներ

Փոխդեկան Լ.Պողոսյանը առաջարկեց մագիստրոսական թեզերի ներկայացումներն ու աշխատանքների քննարկումները կազմակերպել մուլտիմեդիոն լաբորատորիաներում՝ նախօրոք ներկայացնելով ամբիոնային գրաֆիկները:
Առաջարկություն եղավ մագիստրոսական թեզի շրջանակներում ուսանողներին ծանոթացնել մուլտիմեդիոն ծրագրերին:

Ա.Միքայելյանն առաջարկեց մագիստրոսական պրակտիկաների պաշտպանությունները նույնպես անցկացնել այդ լաբորատորիաներում՝ կիրառելով մուլտիմեդիոն տեխնիկայի հնարավորությունները:

Ք.Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ նոյեմբերի յոթին ամբիոնում անցկացվելու է ՄԿԾՀ երրորդ կուրսերի մագիստրոսական թեզերի նախապաշտպանություն:
Խնդիր է առաջացել վերականգնված ուսանողների թեզերի ղեկավարներ ընտրելու հարցում, քանի որ դասաբաշխման մեջ դրանք արտացոլված չեն եղել, սակայն հարցը լուծման ընթացքի մեջ է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Ք.Հովհաննիսյանը, Հ.Հովհաննիսյան:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **3.** Կրթության որակի բարելավմանն ուղղված անելիքների մասին:

Զեկուցողներ՝ Լ.Պողոսյան, ամբիոնային պատասխանատուներ

/Զեկույցը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Վ.Կարապետյանը, Ջ.Գյուլամիրյանը, Ե.Մնացականյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հանձնարարել ամբիոնների պատասխանատուներին մինչև կիսամյակի վերջ իրականացնել ԲԿԾ և ՄԿԾ ընտրովի դասընթացների վերջնարդյունքների և կրթական ծրագրերի մասնագրերի վերջնարդյունքների համապատասխանության ուսումնասիրություն, դրանց վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ:

ԼՍԵՑԻՆ - **4.** Ամբիոնների՝ դպրոցների, մանկապարտեզների և այլ Կրթական հաստատությունների հետ համագործակցության մասին:

Զեկուցողներ՝ Ամբիոնների վարիչներ

/Հաշվետվությունները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Գ.Հայրապետյանը, Լ.Պողոսյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել ամբիոններին՝ մանկապարտեզի և դպրոցի այսօրվա խնդիրներին, կարքներին առնչվող մոդուլներ մշակել և իրականացնել վերապատրաստումներ մանկապարտեզի և դպրոցի կադրերի համար, կազմակերպել դիտարկումներ, քննարկումներ:

ԼՍԵՑԻՆ - **5.** Ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության աշխատանքային պլանների քննարկում և հաստատում:

Զեկուցողներ՝ ՈՒԽ նախագահ

/ՈՒԽ աշխ.պլանը կցվում է:/

Լ.Պողոսյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ ֆակուլըտետի ՈՒԳԸ նախագահը 2018-2019 ուստարում ավարտել է բուհը, և ֆակուլտետը չունի ՈՒԳԸ նախագահ: Խնդիրն այն է , որ համալսարանում ուսանողների գիտական գործունեությունը համակարգող կառույց չկա: Մինչդեռ այս ոլորտում շատ անելիքներ կան:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Ա. Դալլաքյանը, Հ.:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Հաստատել ՈՒԽ-ի աշխատանքային պլանը:

2. Հանձնարարաել ֆակուլտետի գիտության և միջազգային համագործակցության գծով փոխդեկան Լ.Պողոսյանին և ՈՒԽ նախագահին հանդիպել ուսանողների հետ և քննարկել ուսանողական գիտական աշխատանքները կոորդինացնող թեկնածուի հարցը:

3. Ֆակուլտետի խորհրդի հաջորդ նիստում լսել ուսանողների գիտական աշխատանքների կազմակերպման ուղղությամբ նախատեսվող անելիքները:

ԼՍԵՑԻՆ - 6. Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների մասին.

- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրս /մանկավարժահետազոտական պրակտիկա /
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրերի 2-րդ կուրսեր /մանկավարժահետազոտական պրակտիկա/

Զեկուցողներ՝ Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան

/Հաշվետվությունները կցվում են/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Վ.Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Մարությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1.Ընդունել ի գիտություն:

2.ՄԿԾ հեռակա 2-րդ կուրսերի պրակտիկան կազմակերպել և՛ դպրոցներում, և՛ բուհում: Մասնավորապես դպրոցներում կազմակերպել բազային մասնագիտական կրթություն չունեցող ուսանողների պրակտիկան, իսկ նրանք, ովքեր չեն ցանկանա պրակտիկան անցնել դպրոցում, կմնան բուհում: Այն ուսանողները, ովքեր ունեն բազային մասնագիտական կրթություն, պրակտիկան կանցնեն բուհում:

ԼՍԵՑԻՆ - 7. Հեռակա ուսուցման համակարգում կրթական, ուսումնական գործընթացին առնչվող հարցերի քննարկում:

Զեկուցող՝ Ա. Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Միքայելյանը, Գ.Հայրապետյանը, Եվ.Մնացականյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - 8.

- 2018-2019 ուստարվա առկա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի լուծարային փուլերի արդյունքների ներկայացում և քննարկում:

- 2018-2019 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կիսամյակի քննաշրջանի լուծարային փուլերի արդյունքների ներկայացում և քննարկում:

Զեկուցող՝ Ա. Դալլաքյան

/Հաշվետվությունները կցվում է/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Վ.Կարապետյանը, Լ.Պողոսյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Ընթացիկ հարցեր

Լսեցին- 1. ա/Ավարտական աշխատանք գրող ուսանողների (առկա ուսուցման համակարգի ԲԿԾ 4-րդ և հեռակա ուսուցման համակարգի ԲԿԾ 5-րդ կուրսեր) թեմաների վերաձևակերպում և վերահաստատում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Վ.Կարապետյանը, Լ.Պողոսյանը, Ջ.Գյուլամիրյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել ավարտական աշխատանքների թեմաների փոփոխվածտարբերակները:

ԼՍԵՑԻՆ - 2. Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի միջնորդությունը առկա և հեռակա ուսուցման համակարգերի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի 4-րդ կուրսերի ուսումնական պլաններում «Մայրենի լեզու» դասընթացը ներմուծելու մասին:

Զեկուցող՝ Ջ. Գյուլամիրյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Վ.Կարապետյանը, Ա.Դալլաքյանը, Լ.Պողոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի կողմից ներկայացրած՝ առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի 4-րդ

և հեռակա ուսուցման համակարգի 5-րդ կուրսերի ուսումնական պլաններում «Մայրենի լեզու» դասընթացը ներմուծելու մասին հարցն ընդունել ի գիտություն:

2. Հարցի քննարկմանն ու ուսումնական պլաններում առաջարկվող անհրաժեշտ փոփոխությանն անդրադառնալ նոր ուսումնական տարվա նախաշեմին՝ այն համաձայնեցնելով համալսարանի կրթական գործընթացների կառավարման և բարեփոխումների վարչության հետ:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

Նոյեմբերի 28-ին՝ ժամը 14.10-ի, տեղի ունեցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ:

Խորհրդի 25 անդամներից ներկա էին 20-ը:

Օրակարգ՝

1. Միջազգային համագործակցության ծրագրերի և նախագծերի մասին:

Զեկուցողներ՝ Լ. Պողոսյան և ամբիոնների վարիչներ

2. Ասպիրանտների ատեստավորման մասին:

Զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ

3. Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ հեռակա ուսուցման համակարգի 3-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերը հրապարակային պաշտպանության երաշխավորելու մասին:

Զեկուցողներ՝ ամբիոնի վարիչներ

4. Մանկավարժական պրակտիկաների մասին (արդյունքներ)

- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրս/ մանկավարժահետազոտական պրակտիկա /
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրերի 2-րդ կուրսեր /մանկավարժահետազոտական պրակտիկա /
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսեր /ամփոփիչ-գնահատողական /արդյունքներ և պրակտիկայի թղթապանակի պաշտպանության նախապատրաստում
-

Զեկուցողներ՝ Լ. Պողոսյան, Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան

5. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - 1. Միջազգային համագործակցության ծրագրերի և նախագծերի մասին:

Զեկուցողներ՝ Լ. Պողոսյան և ամբիոնների վարիչներ

Լ.Պողոսյանը Ֆակուլտետում և ամբիոններում միջազգային համագործակցության ուղղությամբ տարվող աշխատանքները այդքան էլ գոհացուցիչ չեն: Անհրաժեշտություն կա այդ կապերը ավելի ընդլայնելու: Այդ կապակցությամբ նա առաջարկեց կապ հաստատել ՀՊՄՀ միջազգային բաժնի հետ, պարզել, թե որ համալսարանների հետ է համագործակցում համալսարանը և հատկապես ՄԿԾ թեզերի ղեկավարության շրջանակում փորձել կապեր հաստատել այս համալսարանների հետ՝ ընտրելով միջմշակութային կապերին առնչվող թեմաներ. դա այն պարզագույն և մատչելի ուղին է, որը հնարավոր է իրականացնել: Ապա նշվեց նաև, որ ՀՊՄՀ-ն վերջերս համագործակցության համաձայնագիր է ստորագրել նաև Չեխիայի Բոհեմիայի համալսարանի հետ: Առաջարկություն եղավ Ա.Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման ամբիոնին՝ ճշտել, արդյոք այդ համալսարանում գործո՞ւմ է հայագիտական ամբիոն և փորձել կապեր հաստատել այդ ամբիոնի հետ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Բ.Նահապետյանը, Ա.Դալլաքյանը, Ս.Մարությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ակտիվացնել ամբիոններում ՀՊՄՀ-ի հետ համագործակցող համալսարանների հետ կապը, ամբիոնների գիտական ուղղություններին համապատասխան ձեռք բերել նոր կապեր:

ԼՍԵՑԻՆ - 2. Ասպիրանտների ատեստավորման մասին:

Զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ

Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի, Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնների վարիչները խորհրդի անդամներին տեղեկացրին, որ ամբիոնները չունեն ասպիրանտներ: Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնների 2 ասպիրանտների ուսանելու ժամկետներն էլ լրացել է 2019 թվականի նոյեմբերին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Լ.Պողոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Քանի որ Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի, Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների, Մաթեմատիկայի և տարրական

ուսուցման մեթոդիկայի ամբիոնները չունեն ուսանող ասպիրանտներ, ասպիրանտների ատեստավորման հարցը հանվեց քննարկումից:

ԼՍԵՑԻՆ - 3. Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ՄԿԾ հեռակա ուսուցման համակարգի 3-րդ կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերը հրապարակային պաշտպանության երաշխավորելու մասին:

Զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ

/Քաղվածքները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյանը, Լ.Տեր-Գրիգորյանը, Ս.Մարությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» ՄԿԾ հեռակա ուսուցման համակարգի 3-րդ կուրսի ուսանողների Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի, Մանկավարժության և Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնների գծով ներկայացվող մագիստրոսական թեզերը երաշխավորել հրապարակային պաշտպանության:

ԼՍԵՑԻՆ - 4. Մանկավարժական պրակտիկաների մասին (արդյունքներ)

- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրս/ մանկավարժահետազոտական պրակտիկա /
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրերի 2-րդ կուրսեր /մանկավարժահետազոտական պրակտիկա /
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսեր /ամփոփիչ-գնահատողական /արդյունքներ և պրակտիկայի թղթապանակի պաշտպանության նախապատրաստում

Զեկուցողներ՝Լ.Պողոսյան, Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան

Լ.Պողոսյանը արդրադառնալով պրակտիկայի թղթապանակների պաշտպանությանը, նշեց, որ առավել նպատահարմար է բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսերի ամփոփիչ պրակտիկայի թղթապանակների պաշտպանությունը կազմակերպել դեկտեմբեր անսին՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքները՝

- 2019-2020 ուս.տարվա առկա ուսուցման համակարգի 1-ին կիսամյակում 4-րդ կուրսերի բակալավրական կրթական ծրագրով նախատեսված են 2 քննություններ՝ սեղմ ժամկետներում(13.01.2020-24.01.2020),

- հունվար ամսին սկսվում է հեռակա ուսուցման համակարգի առաջին և երկրորդ կիսամյակի դասերը և մեծանում է հատկապես այն դասախոսների ծանրաբեռնվածությունը, ովքեր ընդգրկված են մանկավարժական պրակտիկայի հանձնաժողովներում,
- այդ նույն ժամանակահատվածում սկսվում է առկա ուսուցման համակարգի ԲԿԾ-ի և ՄԿԾ-ի և հեռակա ուսուցման համակարգի,,Տարրական մանկավարժություն և մեթոդիկա,, ՄԿԾ-ի առաջին կիսամյակի 1ին և 2-րդ կուրսերի քննաշրջանը,որի հետևանքով ունենում ենք լսարանային գերբեռնվածության խնդիրներ,
- սկզբնական կրթության ֆակուլտետում հունվար ամսին սկսվում է հեռակա ուսուցման համակարգի ՄԿԾ-ի ,, Տարրական մանկավարժություն և մեթոդիկա,, մասնագիտության 3-րդ կուրսերի ամփոփիչ ատեստավորումը:

/Հաշվետվությունները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյանը, Գ.Հայրապետյանը, Հ.Սիմոնյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Պրակտիկայի ղեկավարների հաշվետվություններն ընդունել ի գիտություն:

2. Դիմել ՀՊՄՀ ուսումնական գործընթացների գծով պրոռեկտոր Մ.Մելիք-Բախշյանին՝ թույլ տալու կազմակերպել ԲԿԾ 4–րդ կուրսերի ամփոփիչ պրակտիկայի թղթապանակների պաշտպանությունը ս/թ դեկտեմբերի 16-20-ը՝ երկրորդ հերթափոխով:

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ - 1. Ֆակուլտետի ՈՒԳԸ-ի պատասխանատուի ներկայացրած աշխատանքային պլանի հաստատման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Լ.Պողոսյանը, Արմ.Դալլաքյանը, Ա.Դալլաքյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել ՈՒԳԸ աշխատանքային պլանը:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 4

Դեկտեմբերի 20-ին՝ ժամը 14.30-ին, տեղի ունեցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ:

Խորհրդի 25 անդամներից ներկա էին 18 -ը:

Օրակարգ՝

1. 2019-2020 ուստարվա առկա ուսուցման համակարգի 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին:

   Զեկուցող՝ Ա. Դալլաքյան

2. Ամբիոնների կրտսեր գիտաշխատողների (լաբորանտների) աշխատանաքային գործունեությունը ֆակուլտետում:

   Զեկուցող՝ Արհմբյուրոյի նախագահ Ա. Խուգեյան

3. Ամբիոնների՝ 2018-2019թթ. կատարած գիտական և հետազոտական աշխատանքների արդյունքների մասին:

   Զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ

4. Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների և արդյունքների մասին.
   - առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի շարունակական մանկավարժական պրակտիկաների արդյունքների մասին

   . հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ, 4-րդ կուրսերի ուսումնաճանաչողական և 5-րդ կուրսերի ամփոփիչ-գնահատող պրակտիկաների նախապատարստական աշխատանքների մասին:

   Զեկուցողներ՝ Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան

5. Հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողների ամփոփիչ ատեստավորման մագիստրոսական թեզերի պաշտպանության նախապատրաստական աշխատանքների մասին:

   Զեկուցողներ՝ Ա. Դալլաքյան

6. Անդրադարձ ֆակուլտետի ենթակառույցների կատարած աշխատանքներին.
   - Որակի ապահովման խումբ
   - Ուսումնամեթոդական խումբ
   - Համալսարան դպրոց համագործակցություն, դիմորդների մասնագիտական կողմնորոշում
   - Կամավորական գործունեություն
   - Գրական ակումբ

Զեկուցողներ՝ Լ.Պողոսյան, Ջ.Գյուլամիրյան, Ա.Բաբաջանյան , Եվ.Մնացականյան

7. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - **1.** 2019-2020 ուստարվա առկա ուսուցման համակարգի 1-ին կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցող՝Ա. Դալլաքյան

/Զեկուցումը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Լ. Պողոսյանը, Լ.Տեր-Գրիգորյանը, Ս.Մարությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **2**. Ամբիոնների կրտսեր գիտաշխատողների (լաբորանտների) աշխատանքային գործունեությունը ֆակուլտետում:

Զեկուցող՝Արհմբյուրոյի նախագահ Ա. Խուգեյան

/Զեկուցումը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Ա.Միքայելյանը, Ջ. Գյուլամիրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ հստակեցնել ամբիոնների կրտսեր գիտաշխատողների պարտականությունները և ազատել նրանց ավելորդ ծանրաբեռնվածությունից:

ԼՍԵՑԻՆ - **3.** Ամբիոնների՝ 2018-2019թթ. կատարած գիտական և հետազոտական աշխատանքների արդյունքների մասին:

Զեկուցողներ՝ամբիոնների վարիչներ

/Քաղվածքները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա. Դալլաքյանը, Ե. Մնացականյանը, Հ.Հարությունանը:

Լ. Պողոսյանն առաջարկեց համաամբիոնային թեմաներ ընտրել՝ նույն ուղղությամբ աշխատանքներ ծավալելով և՛ թեզերի, և՛ ավարտական, և՝ դասախոսների գիտական հետազոտություններ աշխատանքների թեմաներ հանձնարարելով ու իրականացնելով: Ընդ որում՝ թեման կարող է շարունակական լինել՝ տևել անգամ երկու ուսումնական տարի և ամփոփվել գիտական հոդվածների ժողովածուով:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **4.** Մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների և արդյունքների մասին.

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի շարունակական մանկավարժական պրակտիկաների արդյունքների մասին
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկաների թղթապանակի պաշտպանության արդյունքների մասին *(ուսումնական պլանի համաձայն այն նախատեսված էր 2020 թ. հունվարին, սակայն ֆակուլտետի նախորդ նիստի որոշմամբ՝ այն տեղափոխվել և կազմակերպվել է 2019թ. դեկտեմբերին)*
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ, 4-րդ կուրսերի ուսումնաճանաչողական և 5-րդ կուրսերի ամփոփիչ-գնահատող պրակտիկաների նախապատարստական աշխատանքների մասին:

Զեկուցողներ՝ Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան

Ա. Ղազարյանը նշեց, որ «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանողուհի Նվարդ Մուշեղի Գասպարյանը չի մասնակցել մանկավարժական պրակտիկային, չի մասնակցել նաև թղթապանակի պաշտպանությանը: Նրա հետ կապ հաստատելու և պարզաբանումներ ստանալու բոլոր փորձերն անհաջողության են մատնվել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Գրիգորյանը, Գ.Հայրապետյանը, Ե.Մնացականյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Պրակտիկայի ղեկավարների հաշվետվություններն ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել պրակտիկայի պատասխանատու Ա.Ղազարյանին՝ և դեկանի տեղակալ Ա.Դալլաքյանին հստակեցնել «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի առկա ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանողուհի Նվարդ Մուշեղի Գասպարյանի մանկավարժական պրակտիկայից և թղթապանակի պաշտպանությունից նրա բացակայությունների պատճառները և ուսանողի վերաբերյալ հստակ տեղեկատվություն ներկայացնել:

ԼՍԵՑԻՆ - 5. Հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդի-կա» մագիստրոսի կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանողների ամփոփիչ ատես-տավորման մագիստրոսական թեզերի պաշտպանության նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցողներ՝ Ա.Դալլաքյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Լ.Պողոսյանը, Գ. Հայրապետյան, Հ.Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - 6. Անդրադարձ ֆակուլտետի ենթակառույցների կատարած աշխատանքներին.

- Որակի ապահովման խումբ
- Ուսումնամեթոդական խումբ
- Համալսարան դպրոց համագործակցություն, դիմորդների մասնագիտական կողմնորոշում
- Կամավորական գործունեություն
- Գրական ակումբ

Զեկուցողներ՝ Լ.Պողոսյան, Ջ.Գյուլամիրյան, Ա.Բաբաջանյան, Ե.Մնացականյան, Հ.Խաչատրյան

/Զեկուցումները կցվում են:/

Կամավորական գործունեության մասին հաշվետվությունը ներկայացրեց Հ.Խաչատրյանը, քանի որ այդ աշխատանքները համակարգող Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Ս.Իսկանդարյանը ազատվել էր աշխատանքից և մեկնել ԱՄՆ՝ մշտական կեցության: Նա նշեց, որ կամավորների թիվը նվազել է, ունեն 2 գրանցված կամավոր և 6 1-ին կուրսի ուսանողներ, ովքեր հաճախում են համալսարանի հիմնական դպրոց, բայց՝ ոչ պարբերաբար: Իհարկե կան նաև որոշ օբյեկտիվ պատճառներ. ֆակուլտետի պարապմունքների կազմակերպումը 1-ին հերթով, տուն հասնելու հետ կապված տրանսպորտային դժվարությունները, բավականին տնական մանկավարժական պրակտիկաները տարբեր դպրոցներում և մանկապարտեզներում , տիկին Իսկանդարյանի մեկնելը և այլն:Հարկ կա ուսանողների շրջանում որոշակի աշխատանքներ տանել՝ կամավորական աշխատանքը ֆակուլտետում կրկին աշխուժացնելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Լ.Պողոսյանը, Ք.Ասմարյանը, Ա. Դալլաքյանը:

Արտահայտվողները նշեցին, որ կա անհրաժեշտություն կամավորական աշխատանքները համակարգելու և առաջարկեցին Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոս Ի.Պոնոմարենկոյի թեկնածությունը, ով նախկինում, ի սկզբանե այդ խմբի անդամ է եղել:

Ի.Պոնոմարենկոյի թեկնածության վերաբերյալ առաջարկությունը դրվեց քվեարկության: Ֆակուլտետի խորհրդի 25 անդամներից ներկա էին 18-ը, որոնցից կողմ քվեարկեցին՝ 18-ը, դեմ՝0, ձեռնպահ՝0:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Ֆակուլտետի ենթակառույցների կատարած աշխատանքներին ընդունել ի գիտություն, և այդ հաշվետվությունները տեղադրել ֆակուլտետի բլոգում:

2. Կամավորական աշխատանքները ֆակուլտետում 2-րդ կիսամյակից կոորդինացնելու աշխատանքները փոխանցել Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի դասախոս Ի.Պոնոմարենկոյին:

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ - 1. Սկզբնական կրթության ֆակուլտետի 2019թ. տարեկան հաշվետվության հաստատման մասին:

Զեկուցող՝ Լ. Պողոսյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Հ.Խաչատրյանը, Ե.Մնացականյանը, Ա. Դալլաքյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել սկզբնական կրթության ֆակուլտետի 2019թվականի տարեկանհաշվետվությունը:

ԼՍԵՑԻՆ - 2. Ավարտական և մագիստրոսական աշխատանքների կազմակերպման, իրականացման և գնահատման մասին:

Զեկուցող՝ Լ. Պողոսյան

/Անհրաժեշտ փաստաթղթերը կցվում են:/

Լ.Պողոսյանը խորհրդի անդամներին ներկայացրեց ՀՊՄՀ ավարտական և մագիստրոսական աշխատանքների կազմակերպման, իրականացման և գնահատման նոր կարգը, նոր կարգով պայմանավորված կարծիքների, գրախոսությունների և գնահատման ձևաչափերը: Լ. Պողոսյանը տեղեկացրեց, որ որակի ապահովման խմբի կողմից մշակվել են մագիստրոսական աշխատանքների գնահատման ֆակուլտետային տարբերակ, ինչպես նաև

հետազոտական բաղադրիչի խրախուսմանն ուղղված մագիստրոսի աշխատանքային պլան, որոնք քննարկվել են համալսարանի համապատասխան կառույցների հետ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Հ.Հովհաննիսյանը, Ա. Դալլաքյանը, Ա.Խուգեյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. Առաջիկա աշխատանքներում առաջնորդվել ավարտական և մագիստրոսական աշխատանքների իրականացման նոր կարգով և մշակված ձևանմուշներով:

2. Մագիստրոսական թեզերի գնահատման նպատակով կիրառել գնահատման ֆակուլտետային ձևաչափը:

3. Հանձնարարել ամբիոնների վարիչներին ա)մագիստրոսների հետազոտական աշխատանքները կազմակերպելիս և գնահատելիս առաջնորդվել մագիստրոսի աշխատանքային պլանով, բ) կազմել հետազոտական աշխատանքների խմբային քննարկումների գրաֆիկ:

ԼՍԵՑԻՆ - 3. Սկզբնական կրթության ֆակուլտետի ուսանողների 2019-2020 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում ծավալած կամավորական աշխատանքը կրթական հաստատություններում մասնագիտական գործունեություն ճանաչելու և արդյունքները հաստատելու մասին:

Զեկուցող՝ Հ.Խաչատրյան

/Անհրաժեշտ փաստաթղթերը կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Հ.Հովհաննիսյանը, Ե.Մնացականյանը, Ա. Դալլաքյանը,:

Լ.Պողոսյանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ կամավորները իրենց աշխատանքի վերաբերյալ PP ներկայացումներ էին պատրաստել, և նրանց աշխատանքների ներկայացումը կազմակերպվել է 1-ին կուրսեցիների լսարանում՝ որպես կամավորական աշխատանք ծավալելու խթանման լավ տարբերակ: Ներկայացումները տեղադրված են ֆակուլտետի կամավորական աշխատանքի դասընթացի համար բացված Google-classroom հարթակում:

ՈՐՈՇԵՑԻՆ- Սկզբնական կրթության ֆակուլտետի ներքոնշյալ ուսանողների 2019-2020 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում ծավալած կամավորական աշխատանքը ճանաչել որպես մասնագիտական գործունեություն և նրանց տվյալները ներմուծել համալսարանի Google-classroom կրթական հարթակ.

1.Ջուլիետա Արթուրի Մանուկյան՝ Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա բկծ 2-րդ կուրս -78 ժամ(1.95 միավոր)

2.Մելինե Մուշեղի Խմոյան՝ Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա բկծ 2-րդ կուրս- 88 ժամ(2.2 միավոր)

Անցավ միաձայն:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 5

Փետրվարի 25-ին՝ ժամը 14.30-ի, տեղի ունեցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նիստ:

Խորհրդի 25 անդամներից ներկա էին 20-ը:

Օրակարգ՝

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի և հետազոտական աշխատանքների կազմակերպման մասին. *1-ին կիսամյակի արդյունքներ :*

   Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ

2. Ֆակուլտետի առկա ուսուցման համակարգի 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:

   Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

3. Ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին և 2-րդ կուրսերի 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:

   Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

4. Հաշվետվություն հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման մագիստոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին:

   Զեկուցող՝ հանձնաժողովի նախագահ

5. Հաշվետվություն մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների (և ընթացքի) մասին.

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսերի պրակտիկայի թղթապանակի պաշտպանության արդյունքներ.
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի արդյունքների և 3-րդ ու 4-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկաների ընթացքի մասին.
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 2-րդ կուրսեր /շարունակական ուսումնաճանաչողական պրակտիկա/

նախապատրաստական աշխատանքների մասին հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրս/ մանկավարժահետազոտական պրակտիկա/ նախապատրաստական աշխատանք-ների մասին:

Զեկուցողներ ՝ Ա.Միքայելյան, Ա.Ղազարյան

6. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - 1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի և հետազոտական աշխատանքների կազմակերպման մասին. *1-ին կիսամյակի արդյունքներ :*

Զեկուցողներ՝ Ամբիոնների վարիչներ

Նախադպրոցական մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Վ.Կարապետյանը ներկայացրեց, որ աշխատանքներն ընթանում են ըստ ժամանակացույցի, սակայն մեկ ուսանողի՝ Նվարդ Գասպարյանի պարագայում կան խնդիրներ, քանի որ մինչ այս պահը նա ղեկավարին իր աշխատանքը չի ներկայացրել, ղեկավարն էլ նրա հետ կապ հաստատել չի կարողացել:

Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ջ. Գյուլամիրյանը ներկայացրեց, որ աշխատանքներն ընթանում են բնականոն հունով ՝ նախապես կազմված գրաֆիկով և առաջիկայում նշանակված են հանդիպումներ՝ քննարկելու համար ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախնական տարբերակները:

Ք. Հովհաննիսյանը ներկայացրեց, որ Մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդի-կայի ամբիոնում նույնպես ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի շուրջ աշխատանքներն ընթանում են բնականոն հունով, նույնիսկ այն ուսանողների հետ, որոնք վերականգնվել են դեկտեմբերին և դեռևս չկան նրանց վերականգնման մասին հրամանները:

/Քաղվածքները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ա.Դալլաքյանը, Լ.Պողոսյանը:

Հ.Խաչատրյանը խորհրդի անդամներին պարզաբանեց «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրի ավարտական կուրսի ուսանողուհի Նվարդ Գասպարյանին առնչվող հարցը: Նա տեղեկացրեց, որ ուսանողուհին ուներ նմանատիպ խնդիր նաև մանկավարժական պրակտիկայից: Ուսանողուհու հետ հնարավոր է եղել կապ հաստատել միայն 2020թ. հունվարի կեսերին. նա Ռուսաստանում էր: Հունվարի վերջին վերադարձել է Հայաստան, ներկայացել

դեկանատ, ներկայացրել նաև բժիշկի տեղեկանք ռուսաստանյան կլինիկայից 2019թ.հոկտեմբերի 21-ից մինչև դեկտեմբերի 20-ը ժամանակահատվածի համար: Փաստորեն մանկավարժական պրակտիկայի մեկնարկից 2 շաբաթ հետո *(2019թ. հոկտեմբերի 7)*, չմասնակցելով պրակտիկային, չընդգրկվելով կրթական գործընթացի մեջ (ղեկավարի հավաստմամբ միայն մեկ օր պարզապես ներկայացել և շրջել է մանկապարտեզում), Նվարդ Գասպարյանը մեկնել է Ռուսաստան՝ այդ մասին ոչ մեկի չտեղեկացնելով, չթողնելով որևէ կոորդինատ: Եվ նրա հետ կապը վերականգնվել է միայն 2020 թվականի հունվարի վերջին: Քանի որ ուսանողուհին սովորում է վերջին 4-րդ կուրսում և մանկավարժական ակտիվ պրակտիկան 2-րդ կիսամյակում ֆիզիկապես կրկնել հնարավոր չէ, ուստի Նվարդ Գասպարյանը ներկայացվում է համալսարանից հեռացման: Առկա են պրակտիկայի ղեկավար Ա.Ղազարյանի, դեկանի զեկուցագրերը և համալսարանի համապատասխան կառույցների կարծիքները պրակտիկան կրկնելու անհնարինության վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ամբիոնների վարիչների հաշվետվություններն ընդունել ի գիտություն:
2.Կազմել առկա և հեռակա ուսուցման համակարգերում սովորող ուսանողների ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ընդհանուր խմբային քննարկումների ժամանակացույցեր, խմբային քննարկումներն իրականացնել մուլտիմեդիոն լսարաններում՝ անհրաժեշտ տեխնիկայի կիրառմամբ:
3. Ամբիոններում քննարկում կազմակերպել և առաջնորդվել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կազմակերպման, իրակա-նացման և գնահատման վերաբերյալ ընդունված նոր կարգերով, գնահատելիս առաջնորդվել մագիստրոսական աշխատանքների պլանով:

ԼՍԵՑԻՆ - **2**.Ֆակուլտետի առկա ուսուցման համակարգի 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Ք.Հովհաննիսյանը, Ա.Դալլաքյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **3.** Ֆակուլտետի հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժու-թյուն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին և 2-րդ կուրսերի 2019-2020 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփում:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Վ.Կարապետյանը, Գ.Հայրապետյանը, Ե.Մնացականյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ հատուկ ուշադրություն դարձնել հետազոտական բաղադրիչ պարունակող դասընթացների գնահատման չափանիշները խստագույնս պահպանելուն:

ԼՍԵՑԻՆ - **4.**Հաշվետվություն հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման մագիստոսական թեզերի պաշտպանության արդյունքների մասին:

Զեկուցողներ՝ հանձնաժողովի նախագահ Ա.Չատինյան

Ֆակուլտետի գիտության և միջազգային համագործակցության

հարցերով դեկանի տեղակալ Լ.Պողոսյան

Քանի որ հանձնաժողովի նախագահը ներկա չէր նիստին, հաշվետվությունը ներկայացրեց ֆակուլտետի խորհրդի նախագահը:

/Հաշվետվությունը կցվում է:/

Ֆակուլտետի գիտության և միջազգային համագործակցության հարցերով դեկանի տեղակալ Լ.Պողոսյանը նշված հարցի վերաբերյալ իրականացրել էր մանրամասն SWOT վերլուծություն, որը ներկայացվեց խորհրդի անդամներին, հատկապես անդրադառնալով ամբիոնների վարիչներին:

/ SWOT վերլուծությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ջ.Գյուլամիրյանը, Ք.Հովհաննիսյանը:

Ջ.Գյուլամիրյանն առաջարկեց «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի ընտրովի դասընթացներում փոփոխություն կատարել՝ հնարավորություն ստեղծելով ընտրել մեկական դասընթաց մայրենի լեզվից ու նրա դասավանդման մեթոդիկայից և մաթեմատիկայից ու նրա դասավանդման մեթոդիկայից, որպեսզի մասնագիտական բակալավրական կրթություն չունեցող մագիստրոսները հնարավորություն ունենան դասավանդման մեթոդիկաների ուղղությամբ իրենց ունեցած բացթողումները համալրել այդ դասընթացների միջոցով:

Հ. Խաչատրյանը նշեց, որ խնդիրն առկա է, և առաջին անգամը չէ, որ այս հարցին անդրադառնում ենք , գոյություն ունեցող բացը որոշ չափով մենք փորձել ենք լուծել նրանց համար դպրոցներում կազմակերպելով մանկավարժական պրակտիկան: Սակայն կարելի է ավելի առաջ գնալ՝ հանձնարարել ամբիոններին մշակել 1-ական ժամանակակից արդիական մոտեցումներով դասընթացներ դասավանդման մեթոդիկաներից տարբեր

կիսամյակներում և ոչ մասնագիտական բակալավրական կրթություն ունեցող մեր ուսանողներին ուղղորդել՝ լսելու այդ դասընթացները:

Ք.Հովհաննիսյանը նշեց, որ մագիստրոսների աշխատանքները կազմակերպելիս, կիսամյակային գնահատումները իրականացնելիս հարկավոր է խստիվ հետևել մագիստրոսների աշխատանքային պլանին, ուշադրություն դարձնել և իրականացնել հետազոտական բաղադրիչով նախատեսված բոլոր աշխատանքներն ու դասընթացները:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ ամբիոններում քննարկել նախագահի հաշվետվության և փոխդեկանի SWOT վերլուծություն մեջ ներկայացված առաջարկությունները և նկատի առնել դրանք արդեն իսկ այս մայիս-հունիս ամիսներին նախատեսված ավարտական աշխատանքներն ու մագիստրոսական թեզերը ամփոփիչ ատեստավորման նախապատրաստելիս:

ԼՍԵՑԻՆ - **5.** *Հաշվետվություն մանկավարժական պրակտիկաների նախապատրաստական աշխատանքների (և ընթացքի) մասին.*

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 4-րդ կուրսերի պրակտիկայի թղթապանակի պաշտպանության արդյունքներ.
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 5-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի արդյունքների և 3-րդ ու 4-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկաների ընթացքի մասին.
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 2-րդ կուրսեր /շարունակական ուսումնաճանաչողական պրակտիկա/ նախապատրաստական աշխատանքների մասին հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրս/ մանկավարժահետազոտական պրակտիկա/ նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցողներ՝ Ա.Միքայելյան, Ա.Ղազարյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյանը, Լ. Պողոսյանը, Ս.Մարությանը, Շ.Մարտիրոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2. Դիմել ՀՊՄՀ պրակտիկայի կենտրոնին՝ առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ» և «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսերի մանկավարժական պրակտիկայի սկիզբը դպրոցական արձակուրդով պայմանավորված՝ 23.03.2020–ից տեղափոխել 30.03.2020 և մանկավարժական պրակտիկան կազմակերպել 30.03.2020 – 27.04.2020 ընկած ժամանակահատվածում:

Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ - 1. Ա. Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Կարինե Աղաբաբյանի *«Սովորողների լեզվազգացողության զարգացման մեթոդներն ու միջոցները մանկավարժական բուհում»* գիտամեթոդական ձեռնարկը հրատարակության երաշխավորելու հարցը:

Զեկուցող՝ Լ.Պողոսյան:

/Անհրաժեշտ փաստաթղթերը կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ջ.Գյուլամիրյանը, Հ.Խաչատրյանը, Ե.Մնացականյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Միջնորդել համալսարանի գիտական խորհրդին՝ Ա.Տեր-Գրիգորյանի անվան մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս Կարինե Աղաբաբյանի *«Սովորողների լեզվազգացողության զարգացման մեթոդներն ու միջոցները մանկավարժական բուհում»* գիտամեթոդական ձեռնարկը երաշխավորել հրատա-րակության:

Անցավ միաձայն:

ԼՍԵՑԻՆ - 2. Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Աննա Սիմոնյանի *«Ավագ նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման հնարավորություններն առարկայական զարգացնող միջավայրի պայմաններում»* ուսումնամեթոդական ձեռնարկը Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից հրատարակման երաշխավորության ներկայացնելու հարցը:

Զեկուցող՝ Լ.Պողոսյան:

/Անհրաժեշտ փաստաթղթերը կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Ք.Հովհաննիսյանը, Ա.Դալլաքյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Գեղարվեստական կրթության ֆակուլտետի Երաժշտության մանկավարժության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու Աննա Սիմոնյանի *«Ավագ նախադպրոցականի ճանաչողական հետաքրքրությունների ձևավորման հնարավորություններն առարկայական զարգացնող միջավայրի պայմաններում»* ուսումնամեթոդական ձեռնարկը երաշխավորել հրատարակության:

Անցավ միաձայն:

ԼՍԵՑԻՆ - **3.** Սկզբնական կրթության ֆակուլտետի ռազմավարական ծրագրի գործողությունների պլանով նախատեսված 2019թ. աշխատանքների իրականացման հաշվետվություն:

Զեկուցող՝ Լ.Պողոսյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ք.Ասմարյանը, Ք.Հովհաննիսյանը, Ա.Դալլաքյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Սկզբնական կրթության ֆակուլտետի ռազմավարական ծրագրի գործողությունների պլանով նախատեսված 2019թ. աշխատանքների հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ - **4.** Սկզբնական կրթության ֆակուլտետի ռազմավարական ծրագրի 2020թ. գործողությունների պլանի հաստատման մասին հարցը:

Զեկուցող՝ Լ.Պողոսյան

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Վ.Կարապետյանը, Ալլա Դալլաքյանը, Հ.Հարությունյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել սկզբնական կրթության ֆակուլտետի ռազմավարական ծրագրի 2020թ. գործողությունների պլանը:

ԼՍԵՑԻՆ - **5.** 2020թ. 2-րդ կիսամյակի Google-classroom էլեկտրոնային հարթակի մշտադիտարկման ցուցիչների սահմանման և գործընթացի բարելավման մասին հարցը:

Զեկուցող՝ Լ.Պողոսյան

/Զեկույցը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ս.Մարությանը, Ա. Դալլաքյանը, Ա.Խուգեյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ընդունել ի գիտություն:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

Ապրիլի 23-ին՝ ժամը 12.00-ին, տեղի ունեցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի մարտ-ապրիլ ամիսների համատեղ առցանց նիստը:

Խորհրդի 25 անդամներից ներկա էին 22-ը:

Օրակարգ՝

1. ֆակուլտետի ուսումնական ողջ գործընթացն առցանց կազմակերպելու աշխատանք-ների մասին:

Զեկուցող՝Հ.Խաչատրյան

2. Ավարտական աշխատանքների (ուսուցման առկա և հեռակա համակարգեր) և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի, առցանց նախապաշտպանությունների արդյունքների մասին:

Զեկուցող՝ամբիոնների վարիչներ

3. Մանկավարժական պրակտիկաների կազմակերպման գործընթացի մասին. նախապատրաստական աշխատանքներ, ընթացք, արդյունքներ:

Զեկուցող՝Ա.Միքայելյան, Ա.Ղազարյան, Լ.Պողոսյան

4. Ֆակուլտետի բակալավրի (առկա և հեռակա ուսուցման համակարգեր) և մագիստրոսի կրթական ծրագրերի ավարտական կուրսերի 2019-2020 ուստարվա 1-ին և 2-րդ կիսամյակների քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

5. 2019-2020 ուստարվա բակալավրի՝ առկա և հեռակա ուսուցման համակարգերի, և մագիստրոսիկրթական ծրագրերի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցողներ՝ Լ.Պողոսյան

6. Ընթացիկ հարցեր:

Մինչև օրակարգային հարցերին անցնելը՝ ֆակուլտետի դեկան Հ.Խաչատրյանը ներկայացրեց, որ արտակարգ իրավիճակով պայմանավորված՝ մարտին նիստ չի եղել և երկու ամիսների օրակարգային հարցերը խմբավորվել ու համաձայնեցվել են ներկա իրողություններին: Նա նաև նշեց, որ օրակարգը նախապես ուղարկվել էր խորհրդի անդամներին՝ ծանոթանալու և նկատառումներ անելու նպատակով:

Համատեղ նիստի օրակարգի հարցերը դրվեցին քվեարկության. կողմ՝ 22, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: Անցավ միաձայն:

ԼՍԵՑԻՆ - 1. ֆակուլտետի ուսումնական ողջ գործընթացն առցանց կազմակերպելու աշխատանքների մասին:

Զեկուցող՝Հ.Խաչատրյան

Դեկանը շնորհակալություն հայտնեց ֆակուլտետի բոլոր աշխատակիցներին, ամբիոնների վարիչներին, պրոֆեսորադասախոսական ողջ անձնակազմին՝առցանց աշխատանքները կազմակերպված, համակարգված իրականացնելու համար: Եվ հատուկ շնորհակալություն նաև դեկանատի և ամբիոնների մասնագետներին կազմակերպչական աշխատանքները մասնագիտորեն իրականացնելու համար:

/Զեկույցը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Զ.Գյուլամիրյանը, Ա.Դալլաքյանը, Լ.Պողոսյանը:

Ա.Դալլաքյանն առաջարկեց ավարտական կուրսերում միջանկյալ քննություններն ու ընթացիկները, ամփոփիչ քննություններն ու նախապաշտպանությունները կազմակերպել այնպես, որ դրանք չկուտակվեն՝ ուսանողների համար ավելոդ ծանրաբեռնվածություն չստեղծելու համար:

Լուսինե Պողոսյանն առաջարկեց հարց բարձրացնել ուսանողների՝ դասերին մասնակցության հաշվառման խնդիրը քննարկելու և հաճախման միավորները հաշվարկելու ընդհանուր սկզբունք որոշելու, միասնական լուծում գտնելու վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1.Ուսումնական ողջ գործընթացն առցանց կազմակերպման հարցը ընդունել ի գիտություն:

2. Ապահովել մշտական ամենօրյա ռեժիմով առցանց կապ համալսարանի ստորաբաժանումների, դեկանատի , ամբիոնների և ուսանողներ միջև, քննարկել և արձագանքել ուսանողներին հուզող բոլոր հարցերին:

ԼՍԵՑԻՆ - 2. Ավարտական աշխատանքների (ուսուցման առկա և հեռակա համակարգեր) և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի, առցանց նախապաշտպանությունների արդյունքների մասին:

Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ

Ջ.Գյուլամիրյանը ներկայացրեց, որ Մայրենիի ամբիոնի գծով պատրաստվող բոլոր ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը համարյա պատրաստ են և ձևավորված: Մայիսի առաջին երկու շաբաթներին կանցկացվեն վերջնական նախապաշտպանությունները՝ սահիկներով և նյութերի վերջնական տարբերակների առկայությամբ:

Ք.Հովհաննիսյանը ներկայացրեց, որ մաթեմատիկայի և տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի գծով պատրաստվող ավարտական և մագիստրոսական աշխատանքները ապրիլի երկրորդ կեսին ներկայացվել են, եղել են որոշակի դիտարկումներ, քանի որ նախապաշտպանությունը հանձնաժողովով էր իրականացվում: Մայիսի երկրորդ շաբաթը վերջնական նախապաշտպանություն կիրականացվի: Հանձնարարվել է pdf տարբերակով ներկայացնել աշխատանքը սեղմագրի տեսքով և սահիկները, որպեսզի դրանք գրախոսներին ուղարկվեն:

Վ.Կարապետյանը նշեց, որ նախադպրացական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնում ևս նախապաշտպանություններն իրականացվում են կազմված գրաֆիկի համապատասխան, որին մասնակցում են ամբիոնի բոլոր դասախոսները: Դեռևս աշխատանքային փուլում են, բայց ժամանակին կավարտեն:

/Հաշվետվություններնը կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ս.Մարությանը, Վ.Կարապետյանը, Ա.Դալլաքյանը:

Վ.Կարապետյանն առաջարկեց գրախոսման կարգի մեջ պահանջ փոխել: 1-1,5 էջի սահմանով համառոտագրել և սահիկներով հանդերձ ներկայացնել գրախոսին: Ինչը խորհրդի անդամները դիտեցին որպես լրացուցիչ, ավելորդ աշխատանք:

Հ.Խաչատրյանն առաջարկեց ֆակուլտետի տեղեկատվական հարթակներում դասընթացներ բացել և տեղադրել ավարտական և մագիստրոսական աշխատանքների pdf տարբերակներն ու Pp ներկայացումները: Իսկ ամբիոնի դիսկում որպես ռեսուրսներ պահել ոչ միայն ավարտական և մագիստրոսական աշխատանքների pdf տարբերակներն ու Pp ներկայացումները, այլև ընդդիմախոսի կարծիքը և քննարկումների ձայնագրությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ամբիոնների վարիչների զեկուցումներն ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել դեկանի տեղակալ Ա.Դալլաքյանին՝ դիմել մանկավարժության և ռուսաց լեզվի ամբիոններ՝ նախապաշտպանությունների ընթացքի և ժամկետների վերաբերյալ հաղորդում ներկայացնելու խնդրանքով:

3. Հանձնարարել ամբիոնների վարիչներին նախապաշտպանությունների համար բացել առանձին ամբիոնային հարթակներ՝ այնտեղ տեղադրելով անհրաժեշտ ողջ ինֆորմացիան, ձայնագրությունները, գրականության աղբյուրներ:

ԼՍԵՑԻՆ - **3.** Մանկավարժական պրակտիկաների կազմակերպման գործընթացի մասին. նախապատրաստական աշխատանքներ, ընթացք, արդյունքներ:

Զեկուցող՝ Ա.Միքայելյան, Ա.Ղազարյան, Լ.Պողոսյան

/Հաշվետվությունները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Վ.Կարապետյանը, Գ.Հայրապետյանը, Ե.Մնացականյանը:

Փոխդեկան Լ.Պողոսյանը մտահոգություն հայտնեց, որ Տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի ուսանողների աշխատանքների մեջ միասնականություն չկա. պահանջները կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ ուսանողները նույն վերջնարդյունքներով են գնահատվելու: Կարևոր է, որ բոլոր ամբիոնները նյութերի և վերլուծությունների փոխանակություն իրականացնեն այդ առումով:

Ե.Մնացականյանը նշեց, որ մագիստրատուրայում պրակտիկան առցանց կազմակերպման պարագայում ուսանողները հարկ է, որ մանկավարժական վերլուծության ենթարկեն դիտարկած դասերը, կարողանան բանավոր ներկայացնել թղթապանակի բովանդակությունը :

ՈՐՈՇԵՑԻՆ – **1.** Ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել պրակտիկայի ղեկավարներին և մեթոդիստներին՝ աշխատանքները կազմակերպել պրակտիկայի առարկայական նկարագրի վերջնարդյունքներին համապատասխան և ուժեղացնել միջամբիոնային համագործակցությունը:

ԼՍԵՑԻՆ - **4.** Ֆակուլտետի բակալավրի (առկա և հեռակա ուսուցման համակարգեր) և մագիստրոսի կրթական ծրագրերի ավարտական կուրսերի 2019-2020 ուստարվա 1-ին և 2-րդ կիսամյակների քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Գ.Հայրապետյանը, Ջ.Գյուլամիրյանը, Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – **1.** Ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել փոխդեկան Ա.Դալաքյանին՝ քննական բոլոր գրաֆիկ-ները կազմելիս համաձայնեցնել ամբիոնների և կուրսերի ավագների հետ:

ԼՍԵՑԻՆ - 5. 2019-2020 ուստարվա բակալավրի՝ առկա և հեռակա ուսուցման համակարգերի, և մագիստրոսի կրթական ծրագրերի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցողներ՝ Լ.Պողոսյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյանը, Ք.Ասմարյանը, Ջ.Գյուլամիրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2. Նախապաշտպանությունները կազմակերպել ավարտական աշխատանք-ների պաշտպանության համապատասխան կարգի համաձայն՝ համագործակցելով ֆակուլտետի փոխդեկանի՝ Ա.Դալլաքյանի հետ: Գրախոսներին պետք է ուղարկել աշխատանքների pdf տարբերակները: Համապատասխան ժամկետում ամբիոնները պետք է յուրաքանչյուր ուսանողնի համար ներկայացնեն էլ.փաթեթներ, որտեղ ընդգրկված լինեն ավարտական աշխատանքի /մագիստրոսական թեզի/, ավարտաճառի, ղեկավարի կարծիքի, գրախոսության pdf տարբերակները և PP ներկայացումները /սահիկները/:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 7

Մայիսի 25-ին՝ ժամը 14.00-ին, տեղի ունեցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի մայիսի առցանց նիստը:

Խորհրդի 25 անդամներից ներկա էին 21-ը:

Ներկա էին նաև Մանկավարժության ամբիոնի մասնագետը՝ Էմմա Յարզյանը, ֆակուլտետի ամփոփիչ ատեստավորման տեխնիկական ապահովման պատասխանատուն՝ Մ. Բարսեղյանը, ուսանողական գիտական ընկերության նախագահը՝ Գ. Քոլոզյանը:

Օրակարգ՝

1. Առկա և հեռակա ուսուցման համակարգի 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին:

   Զեկուցող՝ Ա. Դալլաքյան

2. Մանկավարժական և մանկավարժահետազոտական պրակտիկաների ընթացքի և արդյունքների ամփոփում:

   Զեկուցող՝ Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան, Լ. Պողոսյան, ամբիոնային պատասխանատուներ

3. Առկա (առաջին կուրս) և հեռակա (առաջին և երկրորդ կուրսեր) ուսուցման համակարգերի մագիստրոսների մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:

   Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ

4. 2019-2020 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման նախապաշտպանությունների արդյունքների մասին:

   Զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ

5. 2019-2020 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքների մասին:

   Զեկուցողներ՝ Ա. Դալլաքյան, Մ.Բարսեղյան (ամփոփիչ ատեստավորման տեխնիկական գործընթացների պատասխանատու)

6. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - **1.** Առկա և հեռակա ուսուցման համակարգի 2019-2020 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցող՝ Ա. Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Զ.Գյուլամիրյանը, Ք. Ասմարյանը, Լ.Պողոսյանը, Ս. Մարությանը:

Ս. Մարությանն առաջարկեց որևէ կերպ խրախուսել դեկանատի և ամբիոնների աշխատակիցներին:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝

ա/ հետևել ավարտական կուրսերի տեղեկագրերը ժամանակին լրացնելուն, որպեսզի հնարավոր լինի լուծարքները կազմակերպել.

բ/ բանավոր քննություններից առաջ առցանց փորձարկումներ իրականացնել կուրսերի հետ:

ԼՍԵՑԻՆ - **2** . Մանկավարժական և մանկավարժահետազոտական պրակտիկաների ընթացքի և արդյունքների մասին:

Զեկուցող՝ Ա. Միքայելյան, Ա. Ղազարյան, Լ. Պողոսյան, ամբիոնային պատասխանատուներ

/Հաշվետվությունները կցվում են:/

Զեկուցողները նշեցին, որ պրակտիկաների կազմակերպման առցանց ձևաչափը լիովին օգտագործված է և հաղթահարված է պրակտիկայի անցկացման գործընթացում: Նշվեց, որ բոլոր ուսանողները կցվել են ր ակտիվ մասնակցություն ունեցել

Մագիստրոսի կրթական ծրագրերի մանկավարժահետազոտական պրակտիկայի պատասխանատու, դեկանի տեղակալ Լ.Պողոսյանը, ինչպես նաև Մաթեմատիկայի ու տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի մանկավարժահետազոտական պրակտիկայի ղեկավար Մ.Բարսեղյանը, խորհրդի անդամներին տեղեկացրեցին, որ հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող Սաթիկ Մնացականյանը կցվել է պրակտիկայի առցանց հարթակին, սակայն չի մասնակցել պրկտիկայի ընթացքին ու պաշտպանությանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ս.Մարությանը, Ա.Դալլաքյանը:

Հ. Խաչատրայանը խորհրդի անդամներին տեղեկացրեց, որ «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող Սաթիկ Մնացականյանը դիմում է գրել ռեկտորի անունով՝ ներկայացնելով, որ տեխնիկական պատճառներով չի կարողացել մասնակցել 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակի մանկավարժահետազոտական պրակտիկային, խնդրել է պրակտիկան կրկնելու հնարավորություն տալ: Ուսումնական վարչությունից և պրակտիկայի կենտրոնից դիմումն ուղարկվել է ֆակուլտետ՝ կազմակերպման առումով հնարավոր տարբերակներ առաջարկելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2. «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 2-րդ կուրսի ուսանող

Սաթիկ Մնացականյանի դիմումին ռեկտորի կողմից դրական պատասխան տալու պարագայում՝ առաջարկել պրակտիկան կազմակերպելու հետևյալ տարբերակները.

ա) պրակտիկան կարելի է կազմակերպել 2019-20 ուսումնական տարվա քննաշրջանում՝ հունիսի 8-26-ը . ժամանակային առումով այն բավարար է, սակայն այս դեպքում թերի կլինի մանկավարժահետազոտական պրակտիկայի բովանդակային մասը, քանի որ ուսումնական պարապմունքներ այդ ժամանակահատվածում չկան,

բ) պրակտիկան կարելի է կազմակերպել լուծարային փուլերում, որը սովորաբար կազմակերպվում է սեպտեմբեր ամսին 3 շաբաթ տևողությամբ, երբ կվերսկսվեն նաև ուսումնական պարապմունքները:

ԼՍԵՑԻՆ - 3. Առկա (առաջին կուրս) և հեռակա (առաջին և երկրորդ կուրսեր) ուսուցման համակարգերի մագիստրոսների մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:

Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ

/Հաշվետվությունները կցվում են:/

Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչ պարոն Կարապետյանն իր մտահոգությունը հայտնեց այն մասին, որ որքան էլ որ մագիստրոսական թեզի շուրջ աշխատանքը շուտ է սկսվում իրականացվել՝ ըստ գրաֆիկի, միևնույնն է, հիմնական ծանրությունը մնում է վերջին ուսումնական տարվա վրա: Նա խնդրեց այս հարցի վերաբերյալ ամբիոնի հաշվետվությունը լսել հաջորդ նիստին՝ ամբիոնի դասախոսների և մագիստրոսների հետ քննարկումներ կատարելուց հետո:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ. Խաչատրյանը, Գ.Հայրապետյանը, Ք. Ասմարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – **1.** Ընդունել ի գիտություն:

2.Նախադպրոցական մանկավարժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչի՝ վերոնշյալ հարցի վերաբերյալ զեկուցումը տեղափոխել և լսել խորհրդի հաջորդ նիստում:

3. Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ ուշադրության կենտրոնում պահել մագիստրոների կողմից հետազոտական աշխատանքները գրելու և ներկայացնելու գործընթացը և նախատեսված ժամկետները: Ծագած խնդիրների դեպքում ժամանակին տեղյակ պահել դեկանատին՝ արագ և օպերատիվ լուծումներ գտնելու համար:

3. «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի հեռակա ուսուցման համակարգի 2-րդ կուրսի ուսանող Սեդա Նիկողոսյանի (Մանկավարժության ամբիոն) հետազոտական աշխատանքը ներկայացնելու գործընթացի արդյունքների և ընթացքի մասին տեղյակ պահել նաև դեկանատին:

ԼՍԵՑԻՆ - **4.** 2019-2020 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման նախապաշտպանությունների արդյունքների մասին:

Զեկուցողներ՝ ամբիոնների վարիչներ

Բոլոր ամբիոնների գծով պաշտպանվող առկա և հեռակա ուսուցման համակարգերի ավարտական կուրսերի ուսանողների ավարտական աշխատանքներն ու մագիստրոսական թեզերը մի քանի փուլով առցանց նախապաշտպանություններից հետո ամբիոնների կողմից երաշխավորվել են հրապարկային պաշտպանության:

/Քաղվածքները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Գ.Հայրապետյանը, Ե.Մնացականյանը, Ս,Մարությանը,

Ք.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – **1.** Ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել փոխդեկան Ա.Դալաքյանին՝ քննական բոլոր գրաֆիկ-ները կազմելիս համաձայնեցնել ամբիոնների և կուրսերի ավագների հետ:

ԼՍԵՑԻՆ - **5.** 2019-2020 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական աշխատանքների մասին:

Զեկուցողներ՝ Ա. Դալլաքյան,

Մ.Բարսեղյան (ամփոփիչ ատեստավորման տեխնիկական գործընթացների պատասխանատու)

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյանը, Ք.Ասմարյանը, Վ.Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – **1.** Ընդունել ի գիտություն:

2. Շնորհակալություն հայտնել ֆակուլտետի ամփոփիչ ատեստավորման քննությունների տեխնիկական ապահովման խմբին՝ մանրակրկիտ աշխատանքի համար և խնդրել տեխնիկական ապահովման պատասխանատու Մ.Բարսեղ-յանին՝շարունակել անհատական աշխատանքը ուսանողների հետ, հետևել, ան-հրաժեշտության դեպքում նաև օժանդակել, որ ուսանողներն ապահովված լինեն անհրաժեշտ տեխնիկայով՝ համակարգիչ, տեսախցիկ և խոսափող, խնդիրների դեպքում կազմակերպել փորձարկումներ:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

Հունիսի 29-ին՝ ժամը 14.00-ին, տեղի ունեցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի մայիսի առցանց նիստը:

Խորհրդի 25 անդամներից ներկա էին 21-ը:

Օրակարգ՝

1. 2019-2020 ուստարվա առկա ուսուցման համակարգի երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները:

Զեկուցող՝ Ա. Դալլաքյան

2. Հաշվետվություն 2019-2020 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին:

Զեկուցող՝ հանձնաժողովների նախագահներ

3. Մանկավարժական պրակտիկաների և թղթապանակների պաշտպանության արդյունքների մասին.

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 2-րդ կուրսեր /շարունակական ուսումնաճանաչողական մանկավարժական պրակտիկա/
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսեր /կիրառական մանկավարժական պրակտիկա/
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսեր /կիրառական մանկավարժական պրակտիկայի թղթապանակի պաշտպանություն/:

Զեկուցող՝ Ա.Միքայելյան, Ա.Ղազարյան

4. «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին կուրսի ուսանողների մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Վ.Կարապետյան

5. Անդրադարձ ֆակուլտետի ենթակառույցների կատարած աշխատանքներին.

- Որակի ապահովման խումբ
- Ուսումնամեթոդական խումբ
- Համալսարան- դպրոց համագործակցություն, դիմորդների մասնագիտական կողմնորոշում
- Կամավորական գործունեություն

Գրական ակումբ

Զեկուցողներ՝ Լ.Պողոսյան,
Զ.Գյուլամիրյան, Ա.Բաբաջանյան,
Ի.Պոնոմարենկո, Եվ.Մնացականյան

6. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - 1. 2019-2020 ուստարվա առկա ուսուցման համակարգի երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները:

Զեկուցող՝ Ա. Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Զ.Գյուլամիրյանը, Լ.Պողոսյանը, Ա.Դալլաքյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2. Քննությունների տվյալներն ուղարկել ամբիոններ և հանձնարարել վարիչներին՝ ամբիոնների գծով դասավանդվող առարկաների քննությունների տվյալների որակական վերլուծություն կատարել՝ աշխատանքի հետագա կազմակերպման և բարելավման նպատակով:

ԼՍԵՑԻՆ - 2. Հաշվետվություն 2019-2020 ուստարվա առկա և հեռակա ուսուցման համակարգերի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին:

Զեկուցող՝ հանձնաժողովների նախագահներ

/Հաշվետվությունները կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Ս.Մարությանը, Զ.Գյուլամիրյանը, Ա.Դալլաքյանը:

Դեկան Հ. Խաչատրյանը նշեց, որ ամփոփիչ ատեստավորման պաշտպանությունների արդյունքների վերլուծությունը հանգեցնում է այն եզրակացության, որ ֆակուլտետի ամբիոններում չկա հետազոտական աշխատանքների՝ շարադրանքի, պահանջների, ձևակերպումների, կառուցվածքի վերաբերյալ մշակված ընդհանուր-միասնական մոտեցում: Կան հետազոտական աշխատանքների կատարման աշխատանքային պլաններ, սակայն չի հաջողվում հասնել այն բանի, որ աշխատանքները կազմակերպվեն ժամանակցույցով և չկուտակվեն վերջում: Ուսանողների ինքնուրույն աշխատանքի բաժինը քիչ է, իսկ դասախոսների

աշխատանքը՝ շատ: Հարկավոր է խրախուսել ուսանողներին, մեծացնել ավարտական աշխատանքներում նրանց ինքնուրույնության մասնաբաժինը:

Դեկանը շնորհակալություն հայտնեց քննություններին մասնակցող պրոֆեսոր-դասախոսական կազմին, ամբիոնների մասնագետներին, դեկանատի թիմին և ամփոփիչ ատեստավորման տեխնիկական գործընթացների պատասխանատուներին՝ աշխատանքը բարձր մակարդակով և անխափան կատարելու համար:

Փոխդեկան Լուսինե Պողոսյանը հայտնեց իր մտահոգությունն այն մասին, որ պետք է ուսանողին մաքսիմալ աշխատեցնել. գուցե հենց առաջին կուրսից ներկայացնել մեծահասակների կրթության առանձնահատկությունները, նրանց մղել ինքնուրույն աշխատանքի:

Մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ջուլիետա Գյուլամիրյանն առաջարկեց առաջին կուրսից դասավանդվող դասընթացներում ինքնուրույն աշխատանքների շրջանակում ավելացնել հետազոտական աշխատանքի բաժինը, որպեսզի ավարտական աշխատանքը հետազոտական աշխատանքի առաջին փորձը չլինի: Պետք է քայլ առ քայլ սովորեցնել հետազոտական աշխատանք կատարել: Ինչպես նաև մեծացնել պատասխանատվությունը և ուշադրությունը հետազոտական բնույթի ստուգման ձևերի նկատմամբ՝ ռեֆերատ, էսսե, կուրսային աշխատանք, դեպքի ուսումնասիրություն:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2.Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվություններն ուղարկել ամբիոններ՝ նրանցում տեղ գտած նկատառումներն ու առաջարկությունները բովանդակային վերլուծության ենթարկելու և հաջորդիվ աշխատանքների կազմակերպումը բարելավելու նպատակով: Քննարկել նաև ուսանողների՝ ճիշտ ժամանակահատվածներում աշխատանքները կատարելու և ժամկետներում ներկայացնելու տեսանկյունից: Արդյունքները ներկայացնել խորհրդի հաջորդ նիստին:

3. Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ քննարկել և առաջիկայում հետազոտական բնույթի ստուգման ձևերին ավելի մեծ ուշադրություն դարձնել։

4. Ուսանողների հետազոտական աշխատանք կատարելու կարողությունների ձևավորմանն ու բարելավման նպատակով՝ հանձնարարել ֆակուլտետի գիտական գծով դեկանի տեղակալ Լ.Պողոսյանին՝ ձևավորել աշխատանքային խումբ որակի ապահովման ամբիոնային աշխատակիցների և ֆակուլտետի ուսումնամեթոդական խմբի անդամներից, առաջիկա ամիսների ընթացքում մշակել հետազոտական աշխատանքներին ներկայացվող միասնական մոտեցումների ու ձևակերպումների վերաբերյալ առցանց սեմինարների շարք: Ուղղորդել հատկապես, բազային կրթություն չունեցող մագիստրոսներին՝ մասնակցելու այդ սեմինարներին։

ԼՍԵՑԻՆ - **3.** Մանկավարժական պրակտիկաների և թղթապանակների պաշտպանության արդյունքների մասին.

- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 2-րդ կուրսեր /շարունակական ուսումնաճանաչողական մանկավարժական պրակտիկա/
- առկա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա ռուսաց լեզվի ուսուցմամբ», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսեր /կիրառական մանկավարժական պրակտիկա/
- հեռակա ուսուցման համակարգի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրի կրթական ծրագրերի 3-րդ կուրսեր /կիրառական մանկավարժական պրակտիկայի թղթապանակի պաշտպանություն/:

Զեկուցող՝ Ա.Միքայելյան, Ա.Ղազարյան

/Հաշվետվությունները կցվում են։/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Հ.Խաչատրյանը, Լ.Պողոսյանը, Գ.Հայրապետյանը, Ե.Մնացականյանը:

Հ.Խաչատրյանն արձանագրեց, որ ներկա է գտնվել ԲԿԾ 3-րդ կուրսի ուսանողների ամփոփիչ կոնֆերանսին, լսել և դիտել է նրանց ներկայացումները և համամիտ է պրակտիկայի ղեկավար Ա.Միքայելյանի հնչեցրած գնահատականներին այն առումով, որ երրորդ կուրսի ուսանողները, ի տարբերություն նախորդ տարիների և կուրսերի, իրենց պատրաստվածությամբ և կարողություններով պատրաստ են հետազոտական աշխատանքներ կատարելու։ Նա առաջարկեց

ուսանողների խմբային աշխատանքների հաջողված ամփոփիչ ներկայացումները տեղադրել ֆակուլտետի տեղեկատվական հարթակում և ֆեյսբուքյան էջում՝ որպես խրախուսանք այդ ուսանողների, և որպես ուսումնական նյութ այլ կուրսերի ուսանողների համար ։

Հ.Խաչատրյանը շնորհակալություն հայտնեց Ա, Միքայելյանին՝ պրակտիկաների արդյունքների մանրակրկիտ վերլուծության և դրանց հիման վրա արված առաջարկությունների համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2. Պրակտիկայի ամփոփիչ կոնֆերանսի տեսանյութերը որոշ ուղղումներից հետո տեղադրել ֆակուլտետի առցամց հարթակներում որպես ուսումնական նյութ:

3.Հանձնարարել պրակտիկայի ղեկավար Ա.Միքայելյանին՝ հաշվետվության մեջ ներկայացված պրակտիկայի կազմակերպման և ընթացքի հետագա բարելավման վերաբերյալ առաջարկությունները տրամադրել համալսարանի պրակտիկայի վարչությանը՝ դրանք համատեղ քննարկելու համար:

ԼՍԵՑԻՆ - 4. «Նախադպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսի կրթական ծրագրի 1-ին կուրսների ի ուսանողմագիստրոսական թեզերի կատարման ընթացքի մասին:

Զեկուցող՝ ամբիոնի վարիչ Վ.Կարապետյան

/Զեկույցը կցվում են:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ե.Մնացականյանը, Ս.Մարությանը, Գ.Հայրապետյանը,

Լ.Պողոսյանը:

Ս.Մարությանն առաջարկեց ոչ մասնագիտական բազային կրթությամբ մագիստրոսների համար մշակել ընդհանրական դասընթաց և այն ընդգրկել ուսումնական պլանում՝ նրանց համար նախատեսելով լրացուցիչ ուսումնական օր:

Լ.Պողոսյանը առաջարկեց նմանատիպ դասընթացը կամ սեմինարների շարքը կազմակերպել առցանց՝ հաշվի առնելով այն հանգամանքը , որ մագիստրոսները որպես կանոն նաև աշխատում են:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն:

2. Հանձնարարել Նախադպրոցական ամբիոնի վարիչ պարոն Վ.Կարապետյանին՝ ամբիոնում քննարկել և ստեղծել ընդհանրական մասնագիտական առցանց դասընթաց բազային կրթություն չունեցող մագիստրոսների համար:

ԼՍԵՑԻՆ - 5. Անդրադարձ ֆակուլտետի ենթակառույցների կատարած աշխատանքներին.

- Որակի ապահովման խումբ
- Ուսումնամեթոդական խումբ
- Համալսարան- դպրոց համագործակցություն, դիմորդների մասնագիտական կողմնորոշում
- Կամավորական գործունեություն
- Գրական ակումբ

Զեկուցողներ՝ Լ.Պողոսյան,
Ջ.Գյուլամիրյան, Ա.Բաբաջանյան,
Ի.Պոնոմարենկո, Եվ.Մնացականյան

/Հաշվետվությունները կցվում են:/

Քանի որ Համալսարան- դպրոց համագործակցություն, դիմորդների մասնագիտական կողմնորոշման աշխատանքային խմբի ղեկավարը տեխնիկական պատճառներով չէր կարողացել միանալ առցանց նիստին, հաշվետվությունը ներկայացրեց դեկան Հ.Խաչատրյանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Դալլաքյանը, Ք.Ասմարյանը, Վ.Կարապետյանը:

Դեկան Հ.Խաչատրյանը նկատեց, որ կամավորական աշխատանքների մեջ գնալով ավելի քիչ ուսանողներ են ընդգրկվում: Այն հետաքրքրությունը, որը կար սկզբնական շրջանում, գնալով նվազում է: Պետք է սեպտեմբերից սկսել աշխատանքներ տանել՝ ուսանողներին շահագրգռելու, մոտիվացնելու ուղղությամբ:

Ի.Պոնոմարենկոն նշեց, որ առաջին հերթով ուսուցումը մի քիչ խանգարում էր կամավորական աշխատանքներին: Բայց առաջիկայում գուցե հարմար լինի օգտագործել նաև առցանց հնարավորությունները:

Անդրադառնալով բուհ-դպրոց կապին և դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը Հ.Խաչատրյանը նշեց, որ երկրորդ կիսամյակում ուղղվածությունը եղել է ոչ այնքան աշխատանքային խմբի կողմից կրթական հաստատություններ այցելելը, այլ դպրոցներին, աշակերտներին դեպի բուհ հրավիրելը և բուհին, ֆակուլտետին ծանոթացնելը: Այդ աշխատանքները կազմակերպվել են ֆակուլտետի մուլտիմեդիոն լսարաններում դիմորդների համար մշակված հատուկ ծրագրով, ընդ որում՝ մարտից աշխատանքները շարունակվել են արդեն առցանց՝ տեսանյութերի, տարաբնույթ ներկայացումների միջոցով: Եվ այդ

աշխատանքները բավականին հաջողված էին: Միացել էին նաև նախորդ տարիների ֆակուլտետի շրջանավարտները: Այս պահին աշխատանքները շարունակվում են մագիստրոսներին և հեռակա ուսուցման համակարգ դիմորդներին կողմնորոշելու ուղղությամբ:

Ք.Հովհաննիսյանն առաջարկեց առցանց խորհրդատվություններ կազմակերպել հատկապես ոչ մասնագիտական բազային կրթություն ունեցող դիմորդների համար :

ՈՐՈՇԵՑԻՆ –

1. Ֆակուլտետի ենթակառույցների 2019-2020ուտարվա 2-րդ կիսամյակում կատարած աշխատանքների մասին հաշվետվություններն ընդունել ի գիտություն:
2. Հանձնարարել ամբիոնների վարիչներին՝ կազմել առցանց խորհրդատվությունների ժամանակացույց մագիստրատուրա դիմողների համար:
3. Հայտարարությունը տեղատրել համալսարանի կայքում և ֆակուլտետի տեղեկատվական հարթակներում, ֆեյսբուքյան էջում:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

Հուլիսի 6-ին՝ ժամը 14.00-ին, տեղի ունեցավ Սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի առցանց նիստը:

Խորհրդի 25 անդամներից ներկա էին 22-ը:

Օրակարգ՝

1. 2019-2020 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի 1-ին և 2-րդ կուրսերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին:

Զեկուցող՝ Ա.Դալլաքյան

2. Հաշվետվություն ֆակուլտետի 2019-2020 ուստարվա ուսումնադաստիարակչական, հետազոտական աշխատանքների և խորհրդի ընդունած որոշումների կատարման մասին. */Սկզբնական կրթության ֆակուլտետի 2016-2020թ.թ. ռազմավարական ծրագրի գործողությունների պլանին համապատասխան:*

Զեկուցող՝ Հ.Խաչատրյան

3. 2019-2020թթ ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների ինքնավերլուծություն:

Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ

ԼՍԵՑԻՆ - 1. 2019-2020 ուստարվա հեռակա ուսուցման համակարգի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերի 1-ին և 2-րդ կուրսերի երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքների մասին:

Զեկուցող՝ Ա. Դալլաքյան

/Հաշվետվությունը կցվում է:/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Զ.Գյուլամիրյանը, Հ.Խաչատրյանը Լ.Պողոսյանը, Ալլա Դալլաքյանը:

Դեկան Հ.Խաչատրյանն առաջարկեց ամբիոնների վարիչներին և դասախոսներին հեռակա ուսուցման համակարգում սովորողների համար օգոստոսին կայանալիք քննություններից առաջ առցանց կոնսուլտացիաներ կազմակել, թեև առաջիկայում արձակուրդ է սկսվում: Աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու համար կարելի է ամառվա ընթացքում օնլայն հարթակներ բացել և առցանց ուղղորդել ու ղեկավարել նաև հեռակա ուսուցման համակարգի ուսանողների կուրսային աշխատանքները:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Ընդունել ի գիտություն։

2. Առաջարկել ամբիոններին՝ հեռակա ուսուցման համակարգի երրորդ և չորրորդ կուրսերի ամփոփիչ քննություններին և կուրսային աշխատանքների պաշտպանությանը նախընթաց ուսանողների հետ կազմակերպել առցանց կոնսուլտացիաներ։

ԼՍԵՑԻՆ - **2**. Հաշվետվություն ֆակուլտետի 2019-2020 ուստարվա ուսումնադաստիարակչական, հետազոտական աշխատանքների և խորհրդի ընդունած որոշումների կատարման մասին. */Սկզբնական կրթության ֆակուլտետի 2016-2020թ.թ. ռազմավարական ծրագրի գործողությունների պլանին համապատասխան։*

Զեկուցող՝ Հ.Խաչատրյան

/Հաշվետվությունը կցվում է։/

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Վ.Կարապետյանը, Ս.Մարությանը, Ջ.Գյուլամիրյանը, Ք.Հովհաննիսյանը։

Առաջարկություն եղավ կատարված աշխատանքները գնահատել բավարար։

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել սկզբնական կրթության ֆակուլտետի խորհրդի նախագահի ներկայացրած 2019-2020 ուստարվա հաշվետվությունը և բավարար գնահատել կատարված աշխատանքները. *կողմ՝22, դեմ՝0, ձեռնպահ՝0։*

ԼՍԵՑԻՆ - **3.** 2019-2020թթ ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների ինքնավերլուծություն։

Զեկուցող՝ ամբիոնների վարիչներ

/Հաշվետվություն-վերլուծությունները կցվում են։/

Նախադպրոցական մանկուժության և մեթոդիկաների ամբիոնի վարիչ Վ. Կարապետյանը հիմնական ուշադրությունը դարձրեց ուսանողների բանավոր խոսք կառուցելու թույլ կարողությունների վրա՝հատկապես շեշտելով գիտական խոսք կառուցելու մեջ ուսանողների թերացումները։ Առաջարկեց հայոց լեզվի մասնագետներին ուսումնառության չորս տարիների ընթացքում հատուկ աշխատանք տանել այս ուղղությամբ, որովհետև այդ կարողության ձևավորումը երկարատև գործընթաց է և հետևողական աշխատանք է պահանջում։ Նա կարևոր համարեց նաև դասախոսների գիտական հարուստ ու գրագետ խոսքի առկայությունը՝ որպես օրինակ։

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Լ.Պողոսյանը, Գ.Հայրապետյանը, Լ.Տեր-Գրիգորյանը , Հ. Խաչատրյանը։

Լ.Տեր-Գրիգորյանը նշեց, որ ուսանողների բանավոր խոսքի զարգացմանը չի կարող նպաստել ուսումնառության չորս տարիների ընթացքում մայրենի լեզվից ամփոփիչ բանավոր քննության վերացումը: Ուսանողի բանավոր խոսքի զարգացման կարևոր բաղադրիչներից մեկը բանավոր քննությունն է և դրան նախապատրաստումը: Ուստի անհրաժեշտ է վերականգնել մայրենի լեզվից ամփոփիչ քննությունները յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին:

Հ. Խաչատրյանը նշեց, որ գործող ուսումնական պլանները՝ գնահատման բազմաձև տարբերակով հնարավորություն են տալիս յուրաքանչյուր դասընթացի համար ընտրել սովորողների գիտելիքների ստուգման ձևը՝ բանավոր կամ գրավոր, և այդ հարցը ամբիոնի քննարկման և որոշման տիրույթում է:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն:

Խորհրդի նախագահ՝ Հ.Խաչատրյան

Խորհրդի քարտուղար՝ Լ.Տեր-Գրիգորյան